



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 173 «__23__»__05__2018 թ.

Արձանագրություն N 173

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2018թ-ի մայիսի 23-ի նիստի**

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 18-ը:

Օրակարգ

1. 2017-2018թթ. ուս. տարվա առաջին կիսամյակի սոց. հարցումների արդյունքների քննարկում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի առկա ուսուցման ասպիրանտների ատեստացիայի հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
3. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
4. Թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
5. Գիտական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. 2017-2018թթ. ուս. տարվա առաջին կիսամյակի սոց. հարցումների արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. Ատեստավորել ԵՊՀ քաղաքական գործընթացների և ինստիտուտների ամբիոնի առկա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ **Հայկ Սարգսյանին** և միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի 3-րդ տարվա ասպիրանտ **Էրիկ Դավթյանին**:
3. Հաստատել պ.գ.թ. Մ. Հակոբյանի դոկտորական ատենախոսության թեման՝ **«Միջպետական քաղաքական գործընթացների առանձնահատկությունները դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում (Հայաստանի և Թուրքիայի օրինակով)»** վերնագրով:
4. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.

ա/ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ Ա. Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «**Ընդդիմության դերը Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում**», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանին:

բ/ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ Ի. Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «**Ռուսաստանի և ԱՄՆ արտաքին քաղաքական հարաբերությունների դինամիկան ժամանակակից միջազգային հարաբերություններում**», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանին:

գ/ Ղազախստանի ԱԳՆ հատուկ հանձնարարություններով ղեսպան Ժալգաս Ադիլբայելի թեկնածուական ատենախոսության թեման՝ «**Сотрудничество между Республикой Казахстан и Республикой Армения: современное состояние и перспективы**», Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Պետրոսյանին:

5. Երաշխավորել հրատարակության՝

ա/ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ Վ. Պետրոսյանի «**Համընթաց և հաջորդական թարգմանության վարժությունների տեսք**» վերնագրով ուսումնական ձեռնարկը:

բ/ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս Ռ. Պետրոսյանի «**Քաղաքագիտական և դիվանագիտական տերմինների իսպաներեն-հայերեն**» վերնագրով բառարանը:

գ/ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ Ա. Աբրահամյանի և ասիստենտ Ա. Մարտիրոսյանի «**English for Future Diplomats**» վերնագրով դասագիրքը:

դ/ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս Մ. Մկրտչյանի և ասիստենտ Ա. Մարտիրոսյանի «**Դիվանագիտության պատմության նշանակալի իրադարձություններից**» վերնագրով ուսումնական ձեռնարկը:

ե/ ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Ն. Չալըմյանի «**Երկրագիտություն (երկրորդ օտար լեզու արաբերեն)**» վերնագրով դասընթացի ծրագիրը:

զ/ Պ.գ.թ., դոցենտ Տ. Բալայանի «**Արտաքին քաղաքականության տեղեկատվական ապահովումը**» վերնագրով դասախոսությունների ժողովածուն:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Իսրայելյան

Իսկականի հետ ճիշտ է՝